

պատրաստ երաժիշտներու. բայց Մխիթարեանները կը զգուշանան ու պատասխան անդամ չեն տար, կ'ըսէ Հիւրմիւզեան Արքայապետը (25 Փետր. 1862): Վեց ամիս վերջ կը դառնայ վերստին խնդրելու (2 Մեպտ.): ապա Երրորդ անգամ մը (21 Մեպտ.), եւ արդիւնքը միշտ նոյն է: Յուսարեկ Ս. Ղազարցիներու լուծեցէն, կը դիմէ Հոռոմ, Գերպ. Եղուարդ Արքեպիսկոպոսին, որպէսզի նա յօրինէ եւ ինք ձայնադրել տայ, ինչ որ «գեղեցկագոյնն ունէր» մը պիտի ըլլար իրեն: Կը յանձնարարէ զգացնել հոն՝ թէ ինք Լուսինեան մըն է, եւ կը փախաբի՝ որ սկսի այսպէս. «Հայաստան, Աստուած քու պաշտպանդ է»: Եւ կը յարէ թէ «Զէյթուն երթալու ժամանակս՝ Հոռոմեական պետութենէն պիտի անցնիմ, եւ Հոռոմ պիտի տեսնեմ զՁեզ. մանաւանդ որ կ'ուզեմ նաեւ խնդրել Ս. Հօր հայրական օրհնութիւնը» (28 Դեկտ.): Հայ քերթողը նոյնպէս կը մերժէ խնդիրը, չուզելով մտնել քաղաքական խնդիրներու մէջ: Նա կը դառնայ կրկնել, խոստանալով իր անունը ծածուկ պահել (4 Յունուար, 1863). բայց անօգուտ:

Ասոր հետ կը շարունակէ մշակել հայ կարդինալ մը ունենալու հարցն ալ (հ. 14): 1861-ին խնդրած էր նոյն Գերպ. Եղուարդէն՝ կարդինալի մը միջոցով յիշեցնել իր խնդրանքը Ս. Պապին (21 Փետր.): Նոյն տարին դարձեալ պնդած էր խնդրին վրայ: Իսկ 1862-ի վերջերը կը դրէ հետեւեալը նոյն անձին. «Կ'երեւի թէ Ս. Աթոռը կ'ուզէ հաւանիլ հայ կարդինալի մը խնդրանքին. բայց կ'ուզուի՝ որ այս նպատակին համար առաջարկեմ Հաստունը. շատ բնական է որ մերժէի այդպիսի առաջարկութիւն մը»: Ծանօթ է Անտոն Հասունեան պատրիարքին ազգայնոյ վարչութիւնը, որուն վերջ զննելու համար՝ Ս. Գահն օգտակար տեսաւ հանել աթոռէն եւ անոր յանձնել Լուսինեանին

առաջարկած պատիւը (ինչպէս պիտի ըլլար ամէնէն վերջ). բայց նա չէր կարող անշուշտ հաւանիլ իր փախաբին այդպիսի լուծման մը: «Տասը կարդինալ ունիմ, կը յարէ, օգնելու ինձ՝ որ Ս. Հայրը ընտրէ Գերպ. Եղ. Հիւրմիւզը: Արդ Կարդ. Բառնարոյ կը խաբուէր՝ եթէ կը կարծէր յանկարծակի պաշարել զիս» (2 Մեպտ.):

Ուրիշ անգամ մը կը դառնայ կրկնել իր այդ իղձը նոյն արքեպիսկոպոսին. «Հաճելի է ինձի ըսել Ձեզի՝ թէ Դուք կարդինալ պիտի ըլլաք՝ ինչ ալ պատահի, երկու տարիէն կամ աւելի ուշ, վասնզի այն ժամանակ ես արդէն Կիլիկիա պիտի դուռնուիմ» (28 Դեկտ.): Հուսկ Երրորդ անգամ կը դրէ անոր, այս անգամ իր զիտցած հայերէնով. «Իսկ յազադս կարդինալութենի՝ Ես Հասունի յետ բան չունիմ. եւ Հայոց Թաղաւորն չպիտի լսել օտար ազգի խրատը վասն հայկական կարդինալը հաստատելոյ: Լեր կարի հաւաստի՝ որ քոյ կարդինալութիւն վայրապար բան չէ, միայն ժամանակս ոչ է պատահաւոր (4 Յունուար, 1863):

23. — Այսպէս Լեւոնի բոլոր երազները կու գան կը խոնին իրարու քով ու միանդամայն կը կասին յանկարծակի 1863-ի սեմին վրայ, որ հիմնովին պիտի յեղաշրջէ անոր կեանքը: Մինչ ինք կազմ ու պատրաստ է Կիլիկիա մեկնելու, իր սեւ բախտը՝ որ զրկեց զինք արդար իրաւունքներէն անգամ եւ տարիներով օրօրեց յոյսերու եւ պատրանքի մէջ, անընկճելի պատուար մ'է կանգնած իր առջեւ ու կ'ըսէ. «Բաւական է, Լուսինեանդ, ցրուէ՛ցնորքներդ եւ իրական կեանքի դարձիր»: Լուծեցէն խաւարը կը ծածկէ իր վերջին ու կթոռ քայլերը, եւ ոչ իր տպած վաւերագրները, ոչ ալ Ս. Ղազարու դիւանը այլեւս կը խօսին անոնց մասին: Կիլիկիոյ անկախութեան կարմիր պատասխանը տուաւ արդէն Թուրքիա Զէյթունի մէջ՝

Թեւադրութեամբ Անդլիոյ. Գաղղիա կ'ուզէր օժանդակել իրեն, բայց «մեղմովին», այսինքն՝ առանց զէնքի եւ զիւսանալիտական ուղիով, ինչպէս ըսած էր անկեղծօրէն իր դեսպանը Հիւրմիւզեանին (հ. 9), եւ որ նոյնպէս ձախողութեան մատնուեցաւ: Գահազուրկ իշխանի մը պատճառով եւրոպացի բանակներ իրարու եւ թրքականի՞ն հետ պիտի բախէին: Հաւանօրէն այս մասին լսեց նա վճռական ու համոզիչ ձայներ ալ, որ մինչեւ մեզի չհասան:

Պարագային հետ կը զուգարկային իր վերջին խօսքերը առ Գերպ. Եղուարդ. «Ես կ'ապրիմ հոս մեծ առանձնութեան մը

մէջ այն օրէն՝ երբ Ս. Հայրը բանադրեց այս երկիրը: Թաղաւորը շատ անգամ զիս իր մօտ հրաւիրեց, բայց ես բնաւ չգացի» (28 Դեկտ. 1862): Ոչ միայն Իտալիոյ, այլ ամբողջ Եւրոպայի արքունիքներէն եւ կառավարութիւններու իրեն ծանօթ դոնէրէն հետ պիտի մնար այնուհետեւ այդ փառաստենիկ եւ ամէն փառքէ զրկուած հոգին, եւ ամփոփուէր անշուք յարկի մը մէջ, իր ընտանեկան վառարանը, իրական կեանքի դպրոցը:

Հ. ՎԱՐԳԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

Լ Ո Ւ Ի Փ Ա Ս Տ Է Օ Ռ

(1822 – 1895)

ԻՐ ԿԵԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շար. Բազմ. 1954, թիւ 6-7, էջ 175)

Ե.

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ

Ռատո-Վալերի շատ արդարօրէն դիտել կու տայ թէ «Երբ Փաստէօն 1873-ին անդամ կ'ընտրուէր Բժշկական Կաճառին ու կազալով ներս կը մտնէր, իր ընկերներէն ոչ մէկը մտքէն անցուց, թէ երկչոտ այդ նորեկը, բժշկութեան մէջ երբեք չյայտնուած մեծագոյն յեղափոխականը փառքէն հանդիսանար»: Իրապէս ալ, Փաստէօն Կղաւ, այդ մարդին մէջ, հազարամեակներու երկունքովը ծնած մեծագոյն յեղափոխականը: Շատ մը յեղափոխականներ տեսած է մարդկութիւնը, որոնք կրօնական, բարոյական, ընկերաբանական եւ այլ մարդերու մէջ նոր կեանք, նոր դադափարներ ներմուծած, ու նոր տե-

սիլքներով հրապուրած եւ խանդավառած են մարդկային առաւել կամ նուազ զանդուածները: Բայց անոնցմէ ո'չ մէկը չէ կրցած համամարդկային դարձնել իր քաւրոյած վարդապետութիւնը: Շատ մը վարդապետութիւններ, ժամանակի ընթացքին, իրենց վեհութենէն բան մը կորսնցնելով կա'մ ամբողջապէս անհետացած են, կամ զգալիօրէն տկարացած:

Ատոնցմէ բոլորովին տարբեր ճակատագիր ունեցան Փաստէօնի սերմանած դաւադարները: Անոնք, իրենց պարունակած անառարկելի ճշմարտութիւններով, քանդեցին ամբողջ անցեալ մը, ու արժանացան յաւիտեականութեան եւ միադաւանութեան:

Ականաւոր անդղիացի գիտնական մը՝ Թիմոտալ՝ Փաստէօնի գիտերէն հրապուրուած, հետեւեալ նամակը կը գրէր անոր.

«Գիտութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, իրաւունք ունիւր դրական ու վատահայտ տաժեղութիւն, յայտարարելով թէ փոխանցիկ հիւանդութեանց մարդին մէջ բժշկութիւնը պիտի ձերբադաշտուի նախապաշարութեանէ, ու ան պիտի դրուի գիտակ, հաստատ հիմերու վրայ: Ըստ իս, երբ այդ նպատակին հասնելու ըլլանք, մարդկութիւնը պիտի գիտակցի, թէ մեծ մասով Ձեզի կը պարտի իր երախտիքը»: Լիուլի իրականացան թինտալի ակնկալութիւնները. Փաստօն՝ բժշկութիւնը դրաւ հաստատ հիմերու վրայ, նոր դարաշրջան մը կերտելով:

Նախ քան Փաստօն, բժշկութիւնը՝ գիտութեանէ աւելի՝ Մոլիէռատիպ բառախաղերու հաւաքածոյ մըն էր, ուր տաք բնութիւնն ու պաղ բնութիւնը, թացն ու չորը, մաղձն ու աւելը կը հակադրուէին տարօրինակ անհեթեթութեամբ, բացատրելու համար հիւանդութիւններու ծագումը եւ գոյութիւնը:

Նոյնքան ծիծաղելի եւ յաճախ ողբերգական էին դարձանումի սովորական միջոցները՝ նշտրակումն ու կիզումը, արիւն առնելն ու լուծումը, որոնց համընթաց կը կիրարկուէին կենդանիներու կղկղանքովն ու մէզովը, տեսակ տեսակ բոյսերու տերեւներով, արմատներով ու ծաղիկներով եւ չնաչխարհիկ դանազան բաղադրութիւններու խառնուրդովը պատրաստուած դարձահոտ եւ զգուշի դեղերու անհատնում տեսակները, որոնց գործառնութենէն՝ օգուտէ աւելի վնաս պէտք էր ակնկալել:

Գիտէ՞ք թէ ինչպէս կը դարձանուէր կեղծամաշկութիւնը (DIPHTHERIE). շանը կղկղանքը չորցնելէ ու փոշիի վերածելէ ետք, հիւանդին կոկորդին մէջ կը փչէին, կամ թռչուն մը սպաննելով, փորը կը ճեղքէին ու հիւանդին վրէժն վրայ կը տեղաւորէին:

Իսկ Փրանկա՞խոր... ԺՆ. դարէն սկսեալ դեղ չմնաց որ չփորձուի. սնդիկի,

ոսկիի, արանիքի, անթիմուսնի բաղադրութիւններէն սկսեալ մինչեւ կաղինի կեղեւը, կենդանիներու լեարդը, արիւնն ու աղիքները, կամ ուղղակի օձը, մողէզը, մարախը եւ այլն:

Վերջ ի վերջոյ, դարեր շարունակ, նախապատուութիւն կը տրուէր սնդիկով դարմանումին, որուն կիրարկման սկիզբի շրջաններուն, կատարեալ ողբերգութիւններու պատճառ կը դառնար:

Այդ հիւանդութեանէն տառապող մէկը, հիւանդանոց մտնելուն պէս, բժիշկներուն թոյլտուութեամբն ու իրենց ներկայութեանը, խարազանի հարուածներու տարափին տակ նախ իր գործած մեղքին թողութեանը տուրքը կը հատուցանէր, ու անկէ ետքն էր որ կը կիրարկուէր սնդիկի դարմանումը:

Ողջտանգումէն աւելի սարսուղեցիկ ողբերգութիւն մըն ալ այդ դարմանումն էր, որ ոչ թէ հիւանդութիւնը կը բուժէր, այլ կատարելապէս կը թունաւորէր ենթական, ու յաճախ մահուանը պատճառ կը հանդիսանար:

Հիւանդը կը տեղաւորէին տակառի մը մէջ, ամէն կողմէ լաւ մը կը գոցէին, չնչառութեան համար բացուածք մը ձգեցնելով: Տաքութեան աղղեցութեամբ կը շոգիացնէին այդ մետաղը ու անոր շոգին չնչել կու տային, մինչեւ որ հիւանդին բերնէն օրական չորս լիտր լորձունք վազէր, որ է ըսել՝ մինչեւ հիւանդին կատարեալ թունաւորումը: Այս պարագան ոչ միայն լորձնահոսութեամբ կ'արտայայտուէր, այլ նաեւ լեզուին, լինտերուն, շրթներուն, ամբողջ բերնին ու կոկորդին ահաւոր բորբոքումովը, միտերուն ուռելովն ու փտելովը, կենսական գործարաններուն խաթարումովը, տառապեցուցիչ վէրքերու գոյացումովն ու ստամոքնի թափելովը:

Հապա կատաղածութիւնը... Կատաղած շունէ մը խածուած անձը սենեակի մը մէջ

արգելափակելով, լուսամուտներէն վրան մոխիր կը ցանէին, կամ ներքնակներու դէզին տակ կը թաղէին, մինչեւ որ շնահեղձ ըլլար:

Յրանալի մէջ, մինչեւ ԺԹ. դարուն սկիզբները, գաղանաբարոյ սովորութիւնը գոյութիւն ունէր, կատաղածութենէ վարակուած անձին վերի կամ վարի անդամները փարատելով մեռցնելու:

Առանց չափազանցելու կարելի է ըսել, թէ միւս բոլոր հիւանդութիւններուն դարմանումը, առաւել կամ նուազ չափով, այս կարգի վայրագ կամ անհեթեթ գործառնութիւններ էին:

Փաստօնի կը վիճակուէր այս աղտոտ ու գաղանաբարոյ սովորութիւնները արմատախիլ ընելով, գիտական հիմերու կամ տուեալներու վրայ հաստատուած բոլորովին նոր դարադրուի մը հաստատել բժշկութեան մարդին մէջ:

Ճակատագրական տարօրինակ դիպուածով մը, բժշկութեան այս հանճարեղ քուրմն ու յեղափոխականը՝ բժիշկ չէր, այլ քիմիագետ մը:

Այս հանգամանքը իր գաղափարներուն տարածման ոչ միայն արգելք կը հանդիսանար, այլ բաղմամբիւ առիթներով եւ դանազան անձնաւորութիւններու կողմէ նախատինքներու եւ անորակելի վերաբերմունքներու պատճառ կը դառնար:

Յաճախ կ'ափսոսար բժիշկ չըլլալուն՝ եւ կ'ըսէր, թէ մարդիկը պէտք է դատել իրենց գործերովը, եւ ոչ թէ իրենց ընտրած ասպարէզին սահմանափակումներովը:

Ան կ'ըսէր, թէ դանազան գիտութիւնները իրարմէ անառիկ բերդերով կարելի չէ բաժնել, որովհետեւ յաճախ մին միւսէն կ'օգտուի ու զիրար կը լրացնեն:

Ճիշտ այդ ուղիէն ընթացաւ Փաստօնի հանճարը. քիմիաբանութեան վերաբերեալ հարցի մը լուծումը՝ գինիին քացիւմը՝ մանրէներու գոյութիւնը կը յայտ-

նարերէր, ուրկէ կ'օգտուէին հաւասարապէս բժշկութիւնը, վիրաբուժութիւնը եւ անասնաբուժութիւնը:

Քինախնդրական վերաբերմունքներէ վրդովուած, 1879-ի Բժշկական Կաճառի նիստերէն մէկուն ընթացքին, Փաստօն կը բացազանէր. «Սրտի բուռն կակիծով է, որ ստիպուած կ'ըլլամ այսքան յաճախօրէն պատասխանելու տրամաբանութենէ զուրկ հակահաստատութիւններու: Բայց եւ այնպէս, չատ ալ չեմ դարձնար բացատրելու համար քննադատական այս խառնաշփոթութիւնները, որովհետեւ, ըստ իս, բժշկութիւնն ու վիրաբուժութիւնը ներկայիս փոխանցման եւ ճգնաժամի շրջան մը կը բոլորեն»:

«Հին վարդապետութիւնը ծերացաւ եւ ուրիշ մը ծնաւ: Առաջինը, որ տակաւին չատ մը կողմնակիցներ ունի, հիմնուած է փոխանցիկ հիւանդութիւններու ինքնասերումի վարկածին վրայ: Երկրորդը՝ մանրէներու տեսութիւնը՝ կենդանի էակներու փոխանցման վրայ կը յենու, եւ նուիրագործուած է ամբողջական ու ճշգրիտ հետեւողականութիւններով: Շնորհիւ վերոյիշեալ տեսականութեան, յառաջագիծութեան դոնները լայնօրէն կը բացուին: Արդէն գիտութեան եւ յառաջագիծութեան նպատակն ալ այդ է, շարունակաբար նոր հորիզոններ քողազերծել: Անձանօթին ճամբուն վրայ գիտնականը կը նմանի այն ճամբորդին՝ որ հեղհեղ մէկը միւսէն աւելի բարձր գաղաթներ նուաճելով, իր աչքերուն առջեւ կը սփռուին գննութեան ընդարձակ տափաստաններ: Այսօր իւրաքանչիւր փոխանցիկ հիւանդութեան համապատասխան մանրէ մը կը պատկերանայ մեր մտքին մէջ, գոր քողազերծ պէտք է ընել, եւ զմայլելիօրէն կը բացատրէ անոնց փոխանցման եւ գործունէութեան գաղտնիքը»: Փաստօն, արդի եւ ապագայ բժշկութեան այս հաւատամբը քարո-

զած ատեն, ամենադժուարին հարցերը կը լուծէր ամենայն պարզութեամբ, չնորհիւ իր զննելու խորաթափանց կարողութեանը եւ իր հանճարին տարօրինակ փայլատակումներուն: Հակառակ այս բացառիկ ձիրքերուն ու կարողութեանը, իր հակառակորդները, կարծես անոր հանճարին ամբողջ լոյսէն չմոռած՝ տարօրինակ յամառութեամբ կ'ընդդիմանային անոր յայտնաբերած ճշմարտութիւնները որդեգրելու:

Այս մոլուցքէն բոնուած վիրաբոյժ մը՝ Պրոֆ. Կեռէն, չկարենալով հանդուրժել Փաստէօնի կուռ արամաբանութեան հարուածներուն, անպատկառօրէն կը համարձակէր բոունցքը բարձրացնել, հարուածելու համար մեծ գիտնականին անդամալոյժ ու վախճան մարմինը:

Վիճաբանութեան ներկայ եղողներուն կողմէ երբ կ'արդիւնէր այդ տմարդի աւարքը, Կեռէն՝ յաղուրդ տալու համար իր ցասումին՝ կը փութար մենամարտի հրաւեր կարգալ ու մինչեւ իսկ վկաններ զրկել:

Փաստէօն ամենայն պաղարիւնութեամբ կը խնդրէր անոնցմէ որ դիմեն զոյգ մը արդարասէր ակնատեսներու վճիռին: Դատաւորներէն մին կը նշանակուէր Բըժշկական Կաճառի մշտական քարտուղարը՝ Պարոն Պէկլառը, իսկ միւսը՝ առժամեայ քարտուղարը՝ Պարոն Պեոժրոն:

Փաստէօնի պաշտպանութիւնը յանձն կ'առնէր աշխարհահռչակ մանկաբարձ Լիւքա-Շամփոնիէնը, որ իր հրատարակած Բժշկական թերթին մէջ այս առթիւ հետեւեալ կերպով կ'արտայայտուէր. «Մենք կը հիանանք Պարոն Փաստէօնի քաղցրահամբոյր նկարագրին վրայ, որուն համար կ'ըսուի թէ ցասկոտ կոուսակ մըն է: Ահաւասիկ գիտնական մը, որ մերթ ընդ մերթ հակիրճ, հիւթեղ եւ խիստ շահեկան զեկուցումներ կ'ընէ:

Բժիշկ չէ, բայց իր հանճարէն առաջ-

նորդուած, նոր ճամբաներ կը բանայ բըժշկական գիտութեան ամենախրթին հարցերուն մէջէն: Փոխանակ ուշադրութեան եւ հիացումի երախտիքին արժանալու, որուն լիովին արժանի է, կըրուական հակումներ ունեցող քանի մը անհատներու սանձարձակ ընդդիմութեան կը բախի, որոնք շարունակաբար տրամադրուած են քանդելու՝ նուազագոյնը ունկընդիւնէ ետք: Երբ Փաստէօն կ'օգտագործէ գիտական բացատրութիւն մը, որ ամէն մարդ չի հասկնար, կամ եթէ պատահի որ բժշկական աստիճան մը քիչ մը անտեղի կերպով գործածելու ըլլայ, այն ատեն իր դէմը կը ցցուի անվերջանալի ճառերու ուրուականը: Այդ ճառերուն նըպատակն է ապացուցանել, թէ իրմէ առաջ (Փաստէօնէ) բժշկական գիտութեան մէջ ամէն ինչ լաւագոյն կերպով կ'ընթացնար: Փաստէօնի կողմէ ատոնց բանավէճ որակումը՝ խիստ մեղմ կը թուի մեզի»:

Այս դատուն պատկանող ուրիշ Բժիշկ մը եւս, Բժշկական Կաճառի ամպլոնէն կը բացաղանչէր. «Փաստէօնի հանդէպ մի միայն սա նկատումով կրնանք ներդաժիտ գտնուիլ՝ քիմիագէտ մըն է, որ օդատակար հանդիսանալու մարմնէն բոնուած, կ'ուզէ բժշկութիւնը բարեփոխել, որմէ բոլորովին անտեղեակ է»: Տարիներ ետքը, Վիւլլիան, որ հիացող մըն էր Փաստէօնի, այդ կարգի բարբառնալիքներուն ի պատասխան կ'ըսէր. «Պարոն Փաստէօնի պէս մարդ մը, որուն անկեղծութիւնը, ուղղամտութիւնն ու գիտական անշահախնդրութիւնը իբրեւ օրինակ կըրնան ծառայել իր հակառակորդներուն եւ բարեկամներուն, տեւականօրէն այսպիսի տղեղ յարձակումներու անթակայ է»:

Ապա խօսքը Փաստէօնի ուղղելով, կը շարունակէր. «Բոլոր ձեր վրայ հիացողները կը յուսան թէ այդ նպատակաւոր ու շահախնդիր յարձակումները՝ մի միայն ձեր արհամարհանքը կրնան գրգռել»:

Այս պայմաններուն մէջ Փաստէօն ըստիպում էր պայքարիլ ոչ միայն բնութեան դէմ, որուն զաղտնիքները հաղար ու մէկ դժուարութիւններով կարելի է քողարկել ընել, այլ նաեւ մարդկային չարակամութեան ու տգիտութեան դէմ, որոնց յաղթանակելու համար նոյնքան ճիւղ եւ կորով պէտք էր սպառել, որքան առաջին պարագային:

Օր մը Փաստէօն այն աստիճան ընկճուած էր, որ սրտին խորքէն կը հառաչէր. «Երբեք չէի կարծեր թէ ա'յսքան թշնամիներ ունիմ»:

Բայց Փաստէօն իբրեւ բնարան ունէր

հետեւեալ դաւանանքը. «Ինչ ասպարէզի ալ որ նուիրուիք, միշտ վեհ նպատակ մը հետապնդեցէք: Մեծ մարդոց եւ վսեմ գործերու պաշտամունքը ունեցէք»:

Այս բնարանին չնորհիւ, Փաստէօն կը յաղթէր թէ՛ բնութեան եւ թէ՛ մարդոց, ու այսպէսով ի յայտ կը բերէր բոլորովին անձանթ աշխարհ մը, ուր կ'ապրէին անսահմանօրէն փոքրիկ էակներու բազմութիւն մը, որոնք տարօրինակ թափով աճելով ու բազմանալով, տեւականօրէն մահ կը փոխէին շուրջներին:

Բժշ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

(Շարունակելի)

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱՒԱՏՔԸ

ՏԻՐԱՄՕՐ ԱՆԱՐԱՏ ՅԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

(Շար. տե՛ս Բազմ., 1954, թիւ 5, էջ 155)

ՄԱՏԹԵՈՍ ՊՏՐԻ. ԵՒ ՏԵՐՈՅԵՆՑ

Մեր նախորդ յօդուածին վերջաւորութեան, ուսումնասիրելով 1800-էն սուրին Տիրամօր Անարատ Յղութեան մասին յայտնուած կարծիքները Հայ Եկեղեցւոյ մէջ, յիշատակած էինք 1850-ի «Բրիտանիական» մը, Մոսկուա տպուած ու վաւերացուած էջմիածնի Կաթողիկոսէն: Այդ առթիւ մատնանշած էինք թէ ինչպէս մեր մէջ, 1854-ի Պապական վճիռէն առաջ, անխորի ընդունուած էր Տիրամօր Անարատ Յղութիւնը՝ կաթողիկէ եւ ոչ - կաթողիկէ հասարակութիւններէն: Ապա ակնարկելով արդի տարածաշրջաններուն, կ'աղաղէինք ներկայ կարգ մը եկեղեցական գրիչներու հակառակասէր ըն-

թացքը՝ պատմական այս տուեալներուն հանդէպ(1):

Աւելի լուսարանելու համար այս կէտը, կը ներկայացնենք այստեղ պատմական ուրիշ եղելութիւն մը, որ կու գայ հաստատել նոյնպէս մեր եզրակացութիւնները:

* * *

Մատթէոս Զուլսաֆեան, Պատրիարք Կ. Պոլսոյ (1844-1848), եւ ապա Կաթողիկոս էջմիածնի (1858-1865), ծանօթ է իբր հմուտ անձնաւորութիւն մը եկեղեցապատմական ու դաւանական հարցերու՝ իր

(1) Բազմ. ձժԲ. (1954), թ. 5, էջ 167-8:

ԲԱԶՄԱՎԵՊ

